Հավելված

ՀՀ փոխվարչապետի 2019 թ.
ապրիլի 19 -ի N 227 - Ա որոշման

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔՈՒՄ ՁԵՌՔ ԲԵՐՎԱԾ ԲՆԱԿԱՐԱՆԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ ԵՎ ԿԱՀԱՎՈՐՈՒՄ» ԾՐԱԳԻՐԸ

1.	Ծրագրի նպատակը	իրականացնել «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի անապահով ընտանիքների համար բնակարանների ձեռքբերում» բարեգործական ծրագրի շրջանակներում քաղ. Գյումրի, Անի թաղամաս, 7-րդ փողոց, 8-րդ շենք, բն. 21 հասցեում Արտյոմ Գրիգորյանի ընտանիքի համար ձեռք բերված բնակարանի վերանորոգման և կահավորման աշխատանքները
2.	Ծրագիրը բարեգործական որակելու նպատակը	օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային արտոնություններից
3.	Բարեգործը	անհատ բարերարներ (իրավաբանական և ֆիզիկական անձինք)
4.	Ծրագիրը կատարողը	«Հայաստան» համահայկական հիմնադրամ, ՀՀ, քաղ. Երևան, Բաղրամյան պողոտա 26, ՀՎՀՀ՝02507456
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	ՀՀ Շիրակի մարզի Գյումրի քաղաք, բնագավառը՝ սոցիալական
6.	Ծրագրի բյուջեն	Ծրագրի ընդհանուր բյուջեն կազմում է 6.505.190,00 դրամ, որից՝ բնակարանի վերանորոգում՝ 4.511.840,00 դրամ, կահավորում՝ 1.993.350,00 դրամ:
7.	Բարեգործություն ստացողը	Արտյոմ Գրիգորյանի անապահով ընտանիք
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	Նախատեսվում է ծրագիրն իրականացնել 2019 թվականի մարտի 15-ից մինչև հունիսի 11-ը:
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	2019 թ. մարտի 15-ից մինչև հունիսի 11-ը ընկած ժամանակահատվածում նախատեսվում է վերանորոգել և կահավորել բնակարանը: Արժեքը՝ 6.505.190,00 դրամ
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	«ՀԱՏՄ» ՍՊԸ-ի կողմից նախատեսվում է բնակարանի վերանորոգման և կահավորման աշխատանքների իրականացում՝ 6.505.190,00 դրամ:
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում:

12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Նախատեսվում է համագործակցություն Գյումրու քաղաքապետարանի հետ:
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով կներկայացվեն տեղեկություններ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԱՎԻՆՅԱՆ